# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/65 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կախիչների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 13.08.2024 թ. ժամը 11:30-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողով՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան
Ցոլակ Հակոբյան
Արման Երանոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սահակյան
Բացակայում էր՝ Արման Երանոսյանը

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

**1.1** Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

**2.1** Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | «Առկտուր» ՍՊԸ |
| 2 | ԱՁ Գուրգեն Քարտալյան |
| 3 | «Վիններ գրուպ» ՍՊԸ |

**3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1 ԷԱՃ-ի ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Գնման գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Առկտուր» ՍՊԸ | | ԱՁ Գուրգեն Քարտալյան | | «Վիններ գրուպ» ՍՊԸ | |
| | | Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն |
| 1 | **38872750** | 19238333.33 | 23085999.99 | 19747581 | 19747581 | 20058790 | 24070548 |

**5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին**

5.1 «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- մասնակցի կողմից չի ներկայացվել հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ,
- Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը 2024 թվականինը չէ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**6. Տվյալներ մերժված մասնակիցների վերաբերյալ.**

6.1 Հաշվի առնելով 5.1 կետը, մերժել «Առկտուր» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Վիններ գրուպ» ՍՊԸ-ի և Գուրգեն Քարտալյան ԱՁ-ի հայտերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0***

**7. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.**

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0***

7.2 Հրապարակել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0***

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Անահիտ Հակոբյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Արմինե Սահակյան /քարտուղար/